Դանիա

euaa
EUROPEAN UNION
AGENCY FOR ASYLUM

ԻՆՉ ՊԵՏՔ Է ԻՄԱՆԱԼ ԱՊԱՍՏԱՆԻ ԵՎ ՄԻԳՐԱՑԻԱՅԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

Բ տեսակ

ԵՄ+ երկրում անօրինական կերպով բնակվող երրորդ երկրի քաղաքացիներ

ARMENIAN

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ինչո՞ւ եք ստանում այս գրքույկը: 3

Ի՞նչ է ապաստանի եւմիգրացիայի կառավարման կանոնակարգը: 4

Ձեր իրավունքները AMMR(ապաստանի եւմիգրացիայի կառավարման կանոնակարգ) ընթացակարգում գտնվելու ժամանակահատվածում: 5

Ձեր գտնվելու վայրը AMMR(ապաստանի եւմիգրացիայի կառավարման կանոնակարգ) ընթացակարգում գտնվելու ժամանակաշրջանում: 6

Որո՞նք են ձեր պարտականություններն այս գործընթացում: 6

Ինչո՞ւ պետք է դուք հանձնեք ձեր մատնահետքերը եվ լուսանկարվեք: 7

Ի՞նչ հետևանքներ կունենաք, եթե չկատարեք ձեր պարտավորությունները: 8

Ի՞նչ է նշանակում կալանավորումը: 9

Ինչպե՞ս իմանալ այլ ԵՄ+ երկիր տեղափոխվելու մասին: 10

Որքա՞ն ժամանակ կտևի գործընթացը: 11

Ի՞նչ անել, եթե դուք համաձայն չեք փոխանցման որոշման հետ: 12

Ի՞նչ պետք է իմանալ վերաքննիչ բողոքարկման մասին, երբ կասեցնող եվ էական բողոքարկումները համակարգվում են: 13

Ի՞նչ անձնական տվյալներ են հավաքագրվելու: 14

Որո՞նք են ձեր իրավունքները՝ կապված ձեր անձնական տվյալների հետ: 14

ԻՆՉՈՒ՞ԵՔ ՍՏԱՆՈՒՄ ԱՅՍ ԳՐՔՈՒՅԿԸ:

Դուք գտնվում եք այս երկրի տարածքում՝ առանց օրենքով սահմանված համապատասխան թույլտվության:
Այս հանգամանքով պայմանավորված՝ իրականացվել է ձեր մատնահետքերի վերցման եւ լուսանկարման ընթացակարգ: Նշված կենսաչափական տվյալները փոխանցվել են «Eurodac» տվյալների միասնական բազա, որի ստուգման արդյունքում պարզվել է հետեւյալ հանգամանքներից որեւէ մեկի առկայությունը.
Դուք նախկինում ներկայացրել եք միջազգային պաշտպանության (ապաստանի) տրամադրման հայց Եվրոպական միության անդամ կամ դրա հետ ասոցացված (այսուհետ՝ ԵՄ+) այլ պետությունում,
Դուք մուտք եք գործել ԵՄ+ այլ պետության տարածք՝ շրջանցելով այն պետությունը, որտեղ ներկայումս գտնվում եք,
Դուք վերաբնակեցվել եք ԵՄ+ այլ պետություն՝ վերաբնակեցման կամ մարդասիրական ընդունելության եվրոպական կամ ազգային ծրագրի շրջանակներում:
Հաշվի առնելով վերոգրյալը եւ այն հավանականությունը, որ ձեր գտնվելու վայրը պետք է լինի ԵՄ+ այլ անդամ պետություն, ձեր նկատմամբ սկսվել է ընթացակարգ՝ պատասխանատու պետությունը որոշելու եւ ձեզ համապատասխան երկիր տեղափոխելու նպատակով:
Այս գրքույկը պարունակում է ընթացակարգի վերաբերյալ ամբողջական անհրաժեշտ տեղեկությունները:

Դուք այժմ գտնվում եք Դանիա-ում:, որը ԵՄ+ երկիր է:
ԵՄ+ երկրներն են՝

Եվրոպական Միության (ԵՄ) 27 անդամ պետությունները՝ Ավստրիա, Բելգիա, Բուլղարիա, Խորվաթիա, Կիպրոս, Չեխիա, Դանիա, Էստոնիա, Ֆինլանդիա, Ֆրանսիա, Գերմանիա, Հունաստան, Հունգարիա, Իտալիա, Լատվիա, Լիտվա, Լյուքսեմբուրգ, Մալթա, Նիդեռլանդներ, Լեհաստան, Պորտուգալիա, Իռլանդիայի Հանրապետություն, Ռումինիա, Սլովակիա, Սլովենիա, Իսպանիա, Շվեդիա եւ
4 այլ երկրներ՝ Իսլանդիա, Լիխտենշտեյն, Նորվեգիա, Շվեյցարիա:

Ի՞ՆՉ Է ԱՊԱՍՏԱՆԻ ԵՎ ՄԻԳՐԱՑԻԱՅԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԸ:



ԵՄ+ երկրները համաձայնության են եկել ընդհանուր օրենքի շուրջ, որը կոչվում է «Ապաստանի եւ միգրացիայի կառավարման կանոնակարգ» (AMMR)։ Այս կանոնակարգը սահմանում է, թե որ երկիրն է պատասխանատու միջազգային պաշտպանության դիմումի քննության համար։ Բացի այդ, այն կարգավորում է այն իրավիճակները, երբ անձը, որը տեղափոխվել կամ վերաբնակեցվել է ԵՄ+ երկիր, հայտնվում է մեկ այլ ԵՄ+ երկրում առանց թույլտվության։

Եթե դուք արդեն ներկայացրել եք միջազգային պաշտպանության դիմում, ապա երաշխավորված է, որ ձեր դիմումը կքննարկվի որեւէ ԵՄ+ երկրում։ Սակայն դուք չեք կարող ինքնուրույն ընտրել, թե որ երկիրն է լինելու պատասխանատուն՝ դա որոշվում է AMMR-ի օրենքի կանոններով։

Եթե այս գրքույկում կա որեւէ բան, որը ձեզ անհասկանալի է, կարող եք դիմել ներգաղթի աշխատակցին՝ պարզաբանում ստանալու համար։



Ներկայում ԵՄ+ երկրները որոշում են միայն հետեւյալը՝
որ երկիրն է պատասխանատու ձեր դիմումի քննության համար, կամ արդյոք դուք պետք է գտնվեք մեկ այլ ԵՄ+ երկրում։
Եթե որոշվի, որ ձեր դիմումը պետք է քննվի մեկ այլ ԵՄ+ երկրում, կամ դուք պարտավոր եք գտնվել այնտեղ, ապա, ամենայն հավանականությամբ, դուք կտեղափոխվեք այդ երկիր։

ՁԵՐ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ AMMR (ԱՊԱՍՏԱՆԻ ԵՒ ՄԻԳՐԱՑԻԱՅԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ) ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՒՄ ԳՏՆՎԵԼՈՒ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ:



Դուք նաեւ իրավունք ունեք խնդրելու տեղեկատվությունների թարմացում ընթացակարգի վերաբերյալ՝ որով որոշվում է, թե որ ԵՄ+ երկիրն է քննելու ձեր դիմումը: Թարմ տեղեկություններ ստանալու համար դիմե՛ք պատկան մարմիններին՝ Դուք կարող եք կապվել Օտարերկրացիների գործերի Վարչության հետ www.nyidanmark.dk/KontaktAsyl ձևով կամ ստորև նշված QR-կոդով:

Դուք իրավունք ունեք կապվել եւ հաղորդակցվել Միավորված Ազգերի Փախստականների Գործակալության (ՄԱԿ ՓԳԳ) հետ ապաստանի ընթացակարգի ցանկացած փուլում:

ՄԱԿ-ի Փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի գրասենյակը (UNHCR) պաշտպանում է ապաստան հայցողների եւ փախստականների շահերն ու իրավունքները:

ՄԱԿ ՓԳՀ-ի կոնտակտային տվյալները եւ ապաստանի ընթացակարգի վերաբերյալ տեղեկատվությունը կարող եք գտնել ՄԱԿ ՓԳՀ-ի կայքէջում՝ https://help.unhcr.org/:

ՁԵՐ ԳՏՆՎԵԼՈՒ ՎԱՅՐԸ AMMR (ԱՊԱՍՏԱՆԻ ԵՒ ՄԻԳՐԱՑԻԱՅԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ) ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՒՄ ԳՏՆՎԵԼՈՒ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ:



- AMMR (ապաստանի եւ միգրացիայի կառավարման կանոնակարգ) ընթացակարգի քննության ողջ ընթացքում դուք պարտավոր եք գտնվելլ այս երկրում:
- Եթե իշխանությունները որոշեն, որ ձեր դիմումը պետք է քննվի մեկ այլ ԵՄ+ երկրի կողմից, իշխանությունները կկազմակերպեն ձեր ուղեւորությունը դեպի այդ երկիր:

ՈՐՈ՞ՆՔ ԵՆ ՁԵՐ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԱՅՍ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ:

Դուք պետք է

- ներկայացնեք ձեր ինքնությունը հաստատող բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը: Եթե դուք ունեցել եք անձը հաստատող փաստաթուղթ, բայց այլեւս այն ձեզ մոտ չունեք, միեւնույն է, պետք է տեղեկացնեք իշխանություններին, որ անցյալում ձեզ այն տրամադրվել է ձեր երկրի կառավարության կողմից:
- հայտնեք ԵՄ+ անդամ այլ երկրներ կատարած ձեր բոլոր ուղեւորությունների մասին:
- տեղեկացնեք եթե երբեւէ առանց թույլտվության մնացել եք ԵՄ+ անդամ որեւէ երկրում: Տեղեկացրեք իշխանություններին այս կամ ԵՄ+ անդամ այլ երկրում ձեր ընտանիքի անդամների կամ մերձավոր ազգականների առկայության մասին:
- **ԿԱՐԵՎՈՐ Է:** Դուք օրենքով պարտավոր եք հանձնել մատնահետքեր եւ լուսանկարվել:

ԻՆՉՈ՞Ւ ՊԵՏՔ Է ԴՈՒՔ ՀԱՆՁՆԵՔ ՁԵՐ ՄԱՏՆԱՀԵՏՔԵՐԸ ԵՎ ԼՈՒՍԱՆԿԱՐՎԵՔ:

Տվյալ երկրի իշխանությունները պարտավոր են վերցնել ձեր մատնահետքերը եւ կատարել ձեր լուսանկարումը: Այս տվյալները, ձեր ինքնության եւ այլ անհրաժեշտ տեղեկությունների հետ միասին, կփոխանցվեն «Eurodac» կոչվող եվրոպական միասնական տվյալների բազա:

Այս տվյալների բազան օգտագործվում է ԵՄ+ անդամ բոլոր 31 երկրների կողմից: Նրանք կարող են մշակել ձեր տվյալները՝ անհրաժեշտության դեպքում դրանք գտնելու համար: Եթե դուք առանց թույլտվության տեղափոխվեք ԵՄ+ անդամ մեկ այլ երկիր, եւ ձեր մատնահետքերը կրկին վերցվեն, ապա այդ երկրի իշխանությունները կտեսնեն Eurodac-ում պահվող ձեր բոլոր տվյալները:



Eurodac տվյալների բազայի մասին մանրամասն տեղեկություններ կարող եք գտնել առանձին տեղեկատվական գրքույկում:

Ի՞ՆՉ ՀԵՏԵՒԱՆՔՆԵՐ ԿԱՐՈՂ ԵՆ ԱՌԱՋԱՆԱԼ, ԵԹԵ ԴՈՒՔ ՉԿԱՏԱՐԵՔ ՁԵՐ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ:



Առանց թույլտվության այլ ԵՄ+ երկիր տեղափոխվելու կամ այնտեղ միջազգային պաշտպանության համար դիմելու դեպքում ձեզ, ամենայն հավանականությամբ, կվերադարձնեն այն ԵՄ+ երկիր, որը պատասխանատու է ձեր դիմումի քննության համար:

Եթե դուք գտնվում եք ԵՄ+ անդամ մեկ այլ երկրում, այլ ոչ թե այնտեղ, որտեղ ձեզնից պահանջվում է, ձեր ազատ տեղաշարժը կարող է սահմանափակվել, իսկ ձեզ տրամադրվող աջակցության ծավալը՝ կրճատվել:

Ի՞ՆՉ Է ՆՇԱՆԱԿՈՒՄ ԿԱԼԱՆԱՎՈՐՈՒՄԸ:

Կալանավորումը նշանակում է, որ դուք տեղավորվում եք հատուկ հաստատությունում, որտեղից ազատորեն դուրս գալ հնարավոր չէ: Իշխանությունները պետք է ունենան ձեզ կալանավորելու հիմնավոր պատճառ: Նրանք պետք է համոզված լինեն, որ ձեր դեպքում այլ տարբերակ հնարավոր չէ: Որոշում կայացնելուց առաջ իշխանությունները կգնահատեն ձեր անձնական իրավիճակը: Կալանավորման պատճառները կարող են լինել, օրինակ՝

- Դուք չեք պահպանել որոշակի վայրում մնալու պարտավորությունը, կամ կա վտանգ, որ դուք կրկին փախուստի կդիմեք, եւ իշխանությունները չեն կարողանան կապ հաստատել ձեզ հետ:
- Դուք ստացել եք կամ ստացել եք որոշում՝ տեղափոխվելու ԵՄ + երկիր, որը պատասխանատու է ձեր ապաստանի դիմումը քննելու համար, եւ կա վտանգ, որ դուք փախուստի կդիմեք տեղափոխումից առաջ:
- Դուք անվտանգության ռիսկ եք ներկայացնում:

Եթե ձեզ կալանավորեն, դուք իրավունք ունեք բողոքարկելու այդ որոշումը: Դուք կարող եք նաեւ դիմել՝ անվճար իրավաբանական օգնություն եւ փաստաբանի ծառայություն ստանալու համար:

ԿԱՐԵՎՈՐ Է: Եթե առանց թույլտվության մեկնեք ԵՄ+ մեկ այլ երկիր, դա կարող է հանգեցնել ապագայում ձեզ կալանավորելու ռիսկը:

ԻՆՉՊԵ՞Ս ԻՄԱՆԱԼ ԱՅԼ ԵՄ+ ԵՐԿԻՐ ՏԵՂԱՓՈԽՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

Եթե հաստատվի, որ դուք պարտավոր եք գտնվել մեկ այլ ԵՄ+ երկրում, ձեզ կտրամադրվի **փոխանցման որոշում,** որում նշված կլինի, թե ԵՄ+ որ երկիր եք տեղափոխվելու:

Եթե դուք պարտավոր եք գտնվել մեկ այլ ԵՄ+ երկրում, նման պարագայում իշխանությունները կարող են չնախաձեռնել անձնական հարցազրույցի անցկացում:

ՈՐՔԱ՞Ն ԺԱՄԱՆԱԿ ԿՏԵՎԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ:

Երկրների միջեւ հաղորդակցությունը սովորաբար տեւում է մինչեւ **1 ամիս** :

Եթե ԵՄ+ անդամ մեկ այլ երկիր համաձայնի քննել ձեր դիմումը, դուք կտեղափոխվեք այդ երկիր **6 ամսվա** ընթացքում՝ հարցումը հաստատվելու օրվանից սկսած:

Եթե դուք ներկայումս **կալանավորված եք կամ ապագայում կալանավորվելու եք,** ձեր գործը կքննարկվի **անհապաղ**: Ձեր տեղափոխումը պետք է կազմակերպվի **5 շաբաթվա ընթացքում**: Եթե այն չի իրականացվում այդ ժամկետում, դուք պետք է ազատ արձակվեք կալանքից: Այնուամենայնիվ, տեղափոխությունը կկազմակերպվի 6 **ամսվա ընթացքում** ՝ սկսած այն օրվանից, երբ ԵՄ+ երկիրը, որը պատասխանատու է ձեր դիմումը քննելու համար, ընդունել է հարցումը:

Եթե դուք գտնվում եք բանտում հանցագործություն կատարելու համար, փոխանցման ժամկետը կարող է **երկարաձգվել մինչեւ առավելագույնը 1 տարի** :



ԿԱՐԵՎՈՐ Է: Եթե դուք թաքնվում եք, փախուստի եք դիմում կամ այլ կերպ խոչընդոտում եք տեղափոխման գործընթացին՝ չհամագործակցելով իրավասու մարմինների հետ, **տեղափոխման ժամկետը կարող է երկարաձգվել մինչեւ երեք տարի**:

Ի՞ՆՉ ԱՆԵԼ, ԵԹԵ ԴՈՒՔ ՀԱՄԱՁԱՅՆ ՉԵՔ ՓՈԽԱՆՑՄԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՀԵՏ:

Եթե որոշվի, որ ձեր դիմումի քննարկման համար պատասխանատու է ԵՄ+ մեկ այլ երկիր, դուք կստանաք **փոխանցման որոշում**: Այս որոշումը կտեղեկացնի ձեզ, թե որ երկիր կփոխանցվեք:

Եթե դուք համաձայն չեք փոխանցման որոշման հետ, կարող եք դատարանին ներկայացնել ձեր առարկությունները:: Այս գործընթացը կոչվում է վերաքննիչ բողոքարկում: Ձեր բողոքի հիման վրա դատարանը կամ տրիբունալը կկայացնի վերջնական որոշում:

Փոխանցման որոշումը բողոքարկելու համար կա երեք հիմնական պատճառ՝

- մարդու իրավունքների խախտման վտանգ: Դուք կարծում եք, որ տվյալ ԵՄ+ երկիր փոխանցվելու դեպքում կխախտվեն ձեր մարդու իրավունքները:
- նոր տեղեկատվության առկայություն: Հայտնի են դարձել նոր հանգամանքներ, որոնք գոյություն չունեին որոշումը կայացնելու պահին եւ կարող էին ազդել դրա վրա:
- ընտանիքի վերամիավորում: Դուք ունեք ընտանիքի անդամներ ԵՄ+ մեկ այլ երկրում, որոնց հետ պետք է վերամիավորվեք:

Եթե դուք չեք կարող վարձել ձեր սեփական իրավաբանական խորհրդատուին, ձեզ անվճար կտրամադրվի իրավաբանական խորհրդատու, որը կօգնի ձեզ ճիշտ կազմել բողոքը եւ կներկայացնի ձեր շահերը:

Այս գործընթացի ընթացքում ձեզ կուղեկցի թարգմանիչ, որպեսզի ամեն ինչ հասկանալի լինի ձեր մայրենի լեզվով:

Ի՞ՆՉ Է ՊԵՏՔ ԻՄԱՆԱԼ ՎԵՐԱՔՆՆԻՉ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ՄԱՍԻՆ, ԵՐԲ ԿԱՍԵՑՆՈՂ ԵՎ ԷԱԿԱՆ ԲՈՂՈՔԱՐԿՈՒՄՆԵՐԸ ՀԱՄԱԿԱՐԳՎՈՒՄ ԵՆ:

Ձեզ տրամադրված փոխանցման որոշման մեջ կբացատրվի բողոքարկման ժամկետը, վայրը եւ եղանակը:
Դուք պետք է նշեք այն պատճառը կամ պատճառները, թե ինչու համաձայն չեք ձեզ մեկ այլ ԵՄ+ երկիր տեղափոխելու որոշման հետ: Դուք պետք է նաեւ նշեք այն պատճառը կամ պատճառները, թե ինչու ձեզ չպետք է տեղափոխեն այն ԵՄ+ երկիր, որը պատասխանատու է ձեր դիմումի քննարկման համար, մինչ ձեր բողոքարկումը ընթացքի մեջ է:
Դատարանը նախ կորոշի, թե արդյոք դուք կարող եք սպասել վերաքննիչ բողոքի արդյունքին այս երկրում, քանի դեռ ձեր վերաքննիչ բողոքը ընթացքի մեջ է **մեկ ամսվա** ընթացքում: Սա հայտնի է որպես կասեցնող ազդեցությամբ վերաքննիչ բողոք:
Եթե դատարանը որոշի, որ դուք չեք կարող սպասել վերաքննիչ բողոքի արդյունքին այս երկրում, ձեզ կտեղափոխեն այն ԵՄ+ երկիր, որը պատասխանատու է ձեր դիմումը քննելու համար, մինչ ձեր վերաքննիչ բողոքը ընթացքի մեջ է:
Եթե դատարանը որոշի, որ ձեզ պետք է թույլատրվի մնալ այս երկրում ձեր բողոքարկման ընթացքում, դատարանը կփորձի վերջնական որոշում կայացնել այն մասին, թե արդյոք դուք պետք է տեղափոխվեք ձեր դիմումը քննելու համար պատասխանատու ԵՄ+ երկիր՝ կասեցման ուժի մասին որոշման օրվանից հետո 1 ամսվա ընթացքում:
Եթե ձեր բողոքարկումը չընդունվի, ձեզ կտեղափոխեն այն ԵՄ+ երկիր, որը պատասխանատու է ձեր դիմումի քննարկման համար: Տեղափոխումը պետք է տեղի ունենա դատարանի կողմից վերջնական որոշում կայացնելու օրվանից հետո 6 ամսվա ընթացքում:
Եթե դուք ներկայումս կալանավորված եք կամ ապագայում կալանավորվելու եք, ձեր գործը կքննարկվի անհապաղ: Ձեր տեղափոխումը պետք է կազմակերպվի 5 շաբաթվա ընթացքում: Եթե տեղափոխումը չիրականացվի 5 շաբաթվա ընթացքում, դուք կազատվեք կալանքից: Այնուամենայնիվ, ձեր տեղափոխումը կկազմակերպվի 6 ամսվա ընթացքում՝ սկսած այն օրվանից, երբ ձեր դիմումը քննելու համար պատասխանատու ԵՄ+ երկիրը ընդունել է հարցումը:

ԿԱՐԵՎՈՐ Է: Դուք պետք է համագործակցեք իշխանությունների հետ եւ մեկնեք այն ԵՄ+ երկիր, որը պատասխանատու է ձեր դիմումի քննարկման համար:

Ի՞ՆՉ ԱՆՁՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐ ԵՆ ՀԱՎԱՔԱԳՐՎԵԼՈՒ՝

ԵՄ+ երկրի համապատասխան պաշտոնյաները, որտեղ դուք բնակվում եք, կհավաքեն որոշակի տեղեկություններ, այդ թվում՝ ստորեւ նշվածը՝

- ձեր անձնական տվյալները եւ ձեզ հետ ճանապարհորդող ընտանիքի անդամների տվյալները (անուն, քաղաքացիություն, ծննդյան ամսաթիվ եւ վայր)։
- եթե նախկինում օգտագործել եք տարբեր անուններ եւ տվյալներ, նրանք կհարցնեն ձեզ այդ մասին։
- տեղեկություններ ձեր ինքնության եւ ճանապարհորդական փաստաթղթերի մասին։
- Ցանկացած այլ տվյալ, որը կարող է հաստատել ձեր ինքնությունը, ինչպես, օրինակ, ձեր մատնահետքերը։
- Տեղեկություններ ԵՄ+ այլ երկրում բնակվող ձեր ընտանիքի անդամների վերաբերյալ, ներառյալ՝ նրանց անձնական տվյալները, գտնվելու վայրը, իրավական կարգավիճակը եւերբ եք վերջին անգամ նրանց հետ կապի մեջ եղել։
- Մանրամասներ ցանկացած փաստաթղթի մասին, որը ձեզ թույլ է տվել ապրել ԵՄ+ որևէ երկրում, եթե ձեր դեպքում դա կիրառելի է։
- Տեղեկություններ այն փաստաթղթերի վերաբերյալ, որոնք փաստում են, որ դուք մեկ տարուց ավելի ուսանել եք ԵՄ+ երկրում։
- Տեղեկություններ այն երթուղու մասին, որով հասել եք այս երկիր, նշելով բոլոր տարանցիկ երկրները։
- Ձեր անձնական հանգամանքների մանրամասն նկարագրությունը։
- Նախկինում միջազգային պաշտպանություն ստանալու համար ձեր ներկայացրած դիմումների ամսաթվերը եւդրանց արդյունքները։

ՈՐՈ՞ՆՔ ԵՆ ՁԵՐ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ՝ ԿԱՊՎԱԾ ՁԵՐ ԱՆՁՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՀԵՏ։

Դուք իրավունք ունեք ծանոթանալու իշխանություններին ձեր կողմից տրամադրված ցանկացած տվյալի։
Եթե կարծում եք, որ ձեր անձնական տվյալներից որևէ մեկը ճշգրիտ չէ կամ օրինականորեն չի մշակվել, կարող եք պահանջել ծանոթանալ դրանց։ Դրա համար կապվեք անձնական տվյալների վերահսկիչի հետ՝ սխալ տվյալներն ուղղելու կամ անօրինականորեն մշակված տվյալները ջնջելու խնդրանքով։
Դուք կարող եք կապ հաստատել այս երկրի անձնական տվյալների վերահսկիչի հետ՝ օգտագործելով ստորեւ նշված տեղեկությունները։
www.nyidanmark.dk/da/Kontakt-os/Kontakt-Udl%C3%A6ndingestyrelsen/Kontakt-DPO

Այս գրքույկը նախատեսված է բացառապես տեղեկատվական նպատակների համար, եւ որպես այդպիսին չի կարող հիմք հանդիսանալ որեւէ իրավունքի կամ պարտավորության առաջացման համար։
Սույն նյութի բովանդակային հիմքը տրամադրվել է Եվրոպական Միության ապաստանի հարցերով գործակալության (այսուհետ՝ EUAA) կողմից։
Ուղեցույցի վերարտադրման եւ փոփոխման բացառիկ իրավունքը EUAA-ի կողմից վերապահված է միայն Եվրոպական Միության անդամ պետություններին։
EUAA-ն որեւէ պատասխանատվություն կամ պարտավորություն չի ստանձնում սույն ուղեցույցում պարունակվող տեղեկատվության ճշգրտության, բովանդակության, ամբողջականության, օրինականության կամ հուսալիության համար՝ անկախ դրա օգտագործման հանգամանքից ԵՄ անդամ պետությունների կամ որեւէ երրորդ կողմի կողմից։
Ո՛չ EUAA-ն, ո՛չ էլ նրա անունից հանդես եկող որեւէ անձ պատասխանատվություն չի կրում սույն ուղեցույցում տեղ գտած տեղեկատվության օգտագործման հնարավոր հետեւանքների համար։
© Եվրոպական Միության ապաստանի գործակալություն, 2025